Վերօգտագործում

Դասապլան

Ներածություն

Արտադրողի ընդլայնված պատասխանատվությունը (ԱԸՊ) ռազմավարություն է, որի նպատակն է ապրանքների կյանքի ցիկլի ընթացքում արտադրանքի շուկայական գնի մեջ ներառել բնապահպանական ծախսերը: ԱԸՊ-ի ուշադրության կենտրոնում սպառողական ապրանքն է (կամ դրա փաթեթավորումն) օգտագործումից հետո, ինչպես նաև թափոնների ու ապրանքների բաղադրիչներում պոտենցիալ վտանգավոր նյութերը: ԱԸՊ-ի հիմնական նպատակն է արտադրանքի վերամշակման ծավալի բարձրացումը և շրջակա միջավայրի վրա թափոնների ունեցած ազդեցությունը նվազագույնի հասցնելը:

ԱԸՊ-ն աջակցում է վերօգտագործմանը/ վերամշակմանը և նպատակ ունի

1. խրախուսել, որպեսզի արտադրողը օգտագործի վերօգտագործելի և/կամ վերամշակելի նյութեր, ինչպես նաև նվազեցնի դրանց օգտագործումը,
2. ներառել թափոնների կառավարման ծախսերն արտադրանքի գնի մեջ,
3. խթանել թափոնների վերամշակման տեխնոլոգիայի նորարարությունը:

Eco-Schools

13-16 Տարեկան

4 QUALITY EDUCATION

12 RESPONSIBLE CONSUMPTION AND PRODUCTION

Նպատակներ

Աշակերտները կկարողանան.
- սահմանել ԱԸՊ հայեցակարգը,
- բացահայտել այն ընկերությունները/ ապրանքները, որոնք խրախուսում են վերօգտագործումը/ վերամշակումը,
- աջակցել ԱԸՊ հայեցակարգին:

Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը. կայունության աուդիտի իրականացում, ուսումնական պլանների փոխկապակցում, իրազեկում և ներգրավում:
Ուսումնական պլանների փոխկապակցում. գիտություն, բնապահպանություն, հասարակագիտություն:

Պահանջվող ժամանակ/ տևողություն

- **Տնային առաջադրանք 1.** ուսումնասիրել ԱԸՊ-ի առավելություններն ու թերությունները տարբեր շահագրգիռ կողմերի տեսանկյուններից:
- **Դասարանային աշխատանք 1.** 45 րոպե հատկացնել ԱԸՊ-ի մասին քննարկմանը:

Անհրաժեշտ ռեսուրսներ

- Գրենական պիտույքներ աշակերտների համար,
- համացանց ու համակարգիչ/ հեռախոս:

Գործողություններ

Տնային առաջադրանք 1

Դասարանը բաժանել երկու խմբի, հանձնարարել ուսումնասիրել և նախապատրաստվել բանավեճի՝ ԱԸՊ-ն պարտադիր դարձնելու թեմայով կողմ և դեմ դիրքորոշմամբ, խրախուսել փնտրել և ուսումնասիրել դեպքեր, դրանք ներկայացնել հիմնավոր փաստարկներով:

Դասարանային աշխատանք 1

- Աշակերտներին հանձնարարել ձևավորել երեք աշակերտից բաղկացած խումբ, որը խմբային քննարկման ընթացքում կքննարկի ԱԸՊ-ն պարտադիր դարձնելու վերաբերյալ «կողմ» և «դեմ» առաջարկները,
- Խնդրել աշակերտներին բարձրացնել իրենց ձեռքերը և հաշվել, թե նրանցից քանիսն են կողմ կամ դեմ առաջարկին: Կատարել հաշվարկ,
- Խնդրել անդամներին ներկայացնել իրենց «կողմ» և «դեմ» փաստարկները: Ուսուցիչը պետք է հանդես գա որպես քննարկման վարող,
- Քննարկումից հետո կրկին անցկացնել քվեարկություն,
- Խնդրել թվարկել ԱԸՊ-ի առավելությունները:,
- Խնդրել աշակերտներին ներկայացնել հինգ ապրանք, որոնք պետք է ներառվեն ԱԸՊ հայեցակարգում՝ նշելով պատճառը:



Գնահատում

Ապրանքների ցանկը կօգնի աշակերտներին պատկերավոր հասկանալ, թե ինչ է ԱԸՊ-ն:

Հղումներ

https://www.youtube.com/watch?v=HH8Q6jAlmv0
https://www.youtube.com/watch?v=JqnvJQwA1KY
https://balloonsblow.org/
https://balloonsblow.org/flaming-litter/
https://balloonsblow.org/student-action-pack/
https://www.hubbub.org.uk?Event/get-sewspooky-make-a-diy-halloween-costume
http://indiatoday.intoday.in/education/story/ganesh-chaturthi/1/751364.html
https://www.oecd.org/officialdocuments/publicdisplaydocumentpdf/?cite=ENV/EPOC/WGWPR(2005)9/FINAL&doclanguage=en
https://www.deccanherald.com/content/507986/city-generates-700-tonnes-excess.html
https://www.independent.co.uk/life-style/christmas/christmas-waste-total-qarapping-paper-food-scraps-packaging-sticky-tape-study-a8119821.html
https://www.foodpackagingforum.org/news/unep-concerned-about-biodegradable-plastics
https://www.epa.gov/sites/production/files/2015-08/documents/reducing_wasted_food_pkg_tool.pdf
https://brainly.in/question/210415#redmore